

Hib պատվաստանյութ (Haemophilus Influenzae b տիպը)

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis կայքը

1 Ինչու՞ պատվաստվել:

Haemophilus influenzae b տիպը (Hib) բակտերիաներից առաջացած լուրջ հիվանդություն է: Այն սովորաբար առաջանում է 5 տարեկանից ցածր երեխաների մոտ: Այն կարող է նաև ազդել որոշակի բժշկական վիճակներ ունեցող մեծահասակների վրա:

Ձեր երեխան կարող է վարակվել Hib հիվանդությամբ՝ լինելով երեխաների կամ մեծահասակների շրջապատում, ովքեր հնարավոր է լինեն բակտերիակիր և չինանան այդ մասին: Մանրէներն անցնում են մեկ անձից մյուսին: Եթե մանրէները մնում են երեխայի քթում և կոկորդում, հավանական է, որ երեխան չի հիվանդանա: Սակայն երբեմն մանրէները տարածվում են թոքերի և արյան մեջ, և այդ դեպքում Hib-ը կարող է լուրջ խնդիրներ առաջացնել: Սա կոչվում է ինվազիվ Hib հիվանդություն:

Մինչև Hib պատվաստանյութի կիրառումը՝ Hib հիվանդությունը Միացյալ Նահանգներում 5 տարեկանից ցածր երեխաների շրջանում բակտերիալ մենինգիտի գլխավոր պատճառն էր: Մենինգիտը գլխուղեղի և ողնաշարի թաղանթի վարակ է: Այն կարող է հանգեցնել ուղեղի վնասվածքի և խլության: Hib հիվանդությունը կարող է նաև պատճառ հանդիսանալ՝

- թոքաբորբի
- կոկորդի խիստ այտուցվածության՝ դժվարացնելով շնչառությունը
- արյան, հոդերի, ոսկորների և վերասրտենո վարակի
- մահվան

Մինչև Hib պատվաստանյութի կիրառումը, ամեն տարի Միացյալ Նահանգներում 5 տարեկանից ցածր շուրջ 20000 երեխա ունենում էր Hib հիվանդությունը, իսկ նրանց մոտ 3-ից 6 տոկոսը մահանում էր:

Hib պատվաստանյութը կարող է կանխել Hib հիվանդությունը: Hib պատվաստանյութի կիրառումից ի վեր վարակիչ Hib հիվանդության դեպքերը 99%-ով նվազել են: Շատ և շատ երեխաներ դեռ կվարակվեին Hib հիվանդությամբ, եթե դադարեցնեինք պատվաստումը:

2 Hib պատվաստանյութ

Առկա են Hib պատվաստանյութի մի քանի տարբեր ապրանքանիշեր: Ձեր երեխան կստանա 3 կամ 4 դեղաչափ՝ կախված այն բանից, թե որ պատվաստանյութն է օգտագործվում:

Hib պատվաստանյութի դեղաչափերը սովորաբար խորհուրդ են տրվում հետևյալ տարիքներում.

- Առաջին Դեղաչափը. 2 ամսական հասակում
- Երկրորդ Դեղաչափը. 4 ամսական հասակում
- Երրորդ Դեղաչափը՝ 6 ամսական հասակում (եթե անհրաժեշտ է՝ կախված տվյալ պատվաստանյութի ապրանքանիշից)
- Վերջին/հրթանիչ Դեղաչափը՝ 12-15 ամսական հասակում

Hib պատվաստանյութը կարելի է տալ այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

Hib պատվաստանյութը կարող է տրվել որպես համակցված պատվաստանյութի մաս: Պատվաստանյութերի համակցումը կատարվում է այն դեպքում, երբ երկու և ավելի տեսակի պատվաստանյութեր համակցվում են մեկ ներարկման մեջ, որպեսզի մեկ ներարկումն ի վիճակի լինի պաշտպանելու մեկից ավելի հիվանդություններից:

5 տարեկանից բարձր երեխաները սովորաբար Hib պատվաստանյութի կարիք չունեն: Սակայն այն կարող է տրվել փայծաղի բնածին բացակայությամբ կամ մանգաղածն բջջային հիվանդությամբ տառապող ավելի մեծ տարիքի երեխաներին կամ մեծահասակներին՝ նախքան փայծաղի հեռացումը կամ ոսկրածուծի փոխպատվաստումից հետո: Այն կարող է նաև առաջարկվել HIV-ով տառապող 5-18 տարեկան անձանց: Ձեր բժշկից խնդրեք լրացուցիչ տեղեկատվություն:

Բժիշկը կամ ձեզ պատվաստող անձը ձեզ կարող է լրացուցիչ տեղեկատվություն տրամադրել:



U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

3

Որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստանյութը

Hib պատվաստանյութը չպետք է տրվի 6 շաբաթականից փոքր նորածիններին:

Hib պատվաստանյութը չպետք է տրվի ցանկացած անձի, որը երբևէ ունեցել է կյանքին սպառնացող որևէ ալերգիկ ռեակցիա Hib պատվաստանյութի նախկին դեղաչափ ընդունելուց հետո ԿԱՄ այս պատվաստանյութի որևէ մասի նկատմամբ ունի սուր ալերգիա: Պատվաստանյութ տվող անձին հայտնեք ցանկացած խիստ ալերգիկ ռեակցիաների մասին:

Անձինք, ովքեր թեթևակի հիվանդ են, կարող են ստանալ Hib պատվաստանյութ: Անձինք, ովքեր չափավոր կամ խիստ հիվանդ են, հավանաբար պետք է սպասեն մինչև կազդուրվելը: Խոսք էր առողջապահական խնամք ապահովողի հետ, եթե պատվաստանյութ ստացող անձը ներարկման նշանակված օրը լավ չի գգում:

4

Վտանգները

Ցանկացած այլ դեղորայքից, ներառյալ պատվաստանյութերից, կարող են առաջանալ կողմնակի ազդեցություններ: Դրանք սովորաբար մեղմ են և ինքնուրույն վերանում են: Հնարավոր են նաև լուրջ ռեակցիաներ, սակայն դրանք հազվադեպ են:

Hib պատվաստում ստացող մարդկանց մեծ մասը դրա հետ կապված խնդիրներ չունեն:

Hib պատվաստմանը հաջորդող մեղմ խնդիրներ.

- կարմրածություն, տաքություն կամ այտուցվածություն՝ ներարկման հատվածում:
- տենդ

Այս խնդիրները հաճախակի չեն: Եթե դրանք ի հայտ են գալիս, ապա դրանք սովորաբար ի հայտ են գալիս ներարկումից անմիջապես հետո և տևում են 2 կամ 3 օր:

Խնդիրներ, որ կարող են առաջանալ ցանկացած պատվաստումից հետո.

Ցանկացած դեղամիջոց կարող է առաջացնել սուր ալերգիկ ռեակցիա: Նման ռեակցիաները պատվաստանյութից շատ հազվադեպ են՝ 1 միլիոն դեղաչափից ավելի քիչ և կարող են առաջանալ պատվաստումից հետո մի քանի ընթացքում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի հետ, պատվաստանյութի պատճառած լուրջ վնասվածքի կամ մահվան շատ փոքր հավանականություն կա:

Ավելի մեծ երեխաները և մեծահասակները կարող են նման խնդիրներ ունենալ ցանկացած պատվաստումից հետո.

- Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժօգործողություններից հետո, ներառյալ պատվաստումը: Մոտավորապես 15 րոպե նստած կամ պառկած մնալը կարող է օգնել կանխելու ուշաթափությունը և վայր ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքները: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք ունեք թեթև գլխապտույտ կամ տեսողության փոփոխություն կամ զնգոց ականջներում:
- Որոշ մարդիկ ունենում են սուր ցավ ուսի մեջ և ձեռքը շարժելու դժվարություն՝ ներարկման հատվածում: Սա շատ հազվադեպ է պատահում:

Պատվաստանյութերի անվտանգությունը միշտ վերահսկվում է: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք՝ www.cdc.gov/vaccinesafety/

DCH-0449A AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.
Translation provided by the Immunization Action Coalition

5

Ի՞նչ տեղի կունենա լուրջ խնդրի առկայության դեպքում:

Ի՞նչ պետք է ես փնտրեմ:

- Փնտրեք ձեզ վերաբերող ցանկացած բան, ինչպես, օրինակ՝ խիստ ալերգիկ ռեակցիայի նշաններ, շատ բարձր ջերմություն կամ անսովոր վարքագիծ:

Խիստ ալերգիկ ռեակցիայի նշանները կարող են ներառել՝ ցան, դեմքի և կոկորդի, այտուցվածություն, ծանր շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ և թուլություն: Սրանք սովորաբար սկսվում են պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ անց:

Ի՞նչ պետք է ես անեմ:

- Եթե դուք կարծում եք, որ դա սուր ալերգիկ ռեակցիա է կամ այլ անհետաձգելի դեպք, որը չի կարող սպասել, զանգահարեք 9-1-1 կամ զնացեք մոտակա հիվանդանոց: Այլապես՝ զանգահարեք ձեր բժշկին:
- Այնուհետև, ռեակցիայի մասին պետք է զեկուցել Vaccine Adverse Event Reporting System-ին (VAERS) (Պատվաստանյութերի անբարենպաստ ազդեցությունների հաշվետվությունների համակարգ): Ձեր բժիշկը կարող է գրանցել այս զեկույցը, կամ դա դուք կարող եք ինքներդ էլ անել VAERS վեբ կայքի միջոցով՝ www.vaers.hhs.gov, կամ զանգահարելով 1-800-822-7967 հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տալիս:

6

Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիրը

National Vaccine Injury Compensation Program-ը (VICP) (Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից տուժած մարդկանց:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ վնասվել են պատվաստանյութից, կարող են իրազեկվել ծրագրի մասին և բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով 1-800-338-2382 կամ այցելելով VICP կայք www.hrsa.gov/vaccinecompensation: Բողոք ներկայացնելու համար ժամանակային սահմանափակում կա:

7

Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր բժշկին: Նա կարող է ձեզ տալ պատվաստանյութի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկատվության այլ աղբյուրներ:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահական բաժանմունք:
- Կապվեք Centers for Disease Control and Prevention-ի (CDC) (Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնների) հետ.
 - Չանգահարեք 1-800-232-4636 հեռախոսահամարով (1-800-CDC-INFO) կամ
 - Այցելեք CDC-ի կայք հետևյալ հասցեով՝ www.cdc.gov/vaccines

Vaccine Information Statement Hib Vaccine

4/02/2015

Armenian

42 U.S.C. § 300aa-26

Office Use Only



Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: